

ՏԱՍՏԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 բուրլ, կես տարվանը 6 բուրլ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք գիտնում են ուղղակի
Тифлис. Редакция «Менк»

Խմբագրատունը բաց է առաւօտուն 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Ցայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի տնտեսական խնդիր—Ներքին ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ: Նամակ Վարսից: Ներքին լուրեր: ԱՊ-
ՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Եղիպատո: Արտաքին լու-
րեր: ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ: ՅԱՅԱՐԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:
—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Մի քանի խորհրդածութիւն-
ներ:

ՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆԴԻՐ

Մի ժամանակ կովկասեցին հիւանդանա-
րով աւելորդ էր համարում զիմեւ բժշկին:
Նա կամ թողնում էր հիւանդութիւնը ան-
խնամ, աներով, որ «այդպէս էլ կանցնի»,
իսկ հիւանդութիւնը, ի հարկէ, սաստկա-
նում էր, կամ խորշելով ուսումնական բժշ-
կներէր, գիտնում էր ժողովրդական հեքիմ-
ներին, դաւաքներին, նոյն իսկ փաւր-
ցանդներին: Անգաղափար, նախապաշար-
ված հայի կամ վրացու կարծիքով հիւան-
դութիւնը առաջանում էր չար ոգիներից,
դեւերից և նա համոզված էր որ այս ինչ հի-
ւանդութիւն կարող է բժշկել այս ինչ խա-
չը, այն ինչ հիւանդութիւն կը բժշկվի,
եթէ հիւանդին տանէք այն ինչ ուխտա-
տեղին:

Բայց, ի հարկէ, այդ ազդեցութիւնը,
այդ նախապաշարմունքները հետզհետէ
անհետանում են մեր ամբօրի մէջ և տեղ
են տալիս աւելի խելացի հայացքներին:
Այժմ մեր ժողովրդի մեծամասնութեան մէջ
արդէն կազմվել է հաստատ համոզմունք
որ հիւանդութեան ժամանակ պէտք է դի-
մել բժշկին և ոչ թէ դաւաքին կամ փաւ-
րացանդին:

Բայց եթէ բանաւոր էակները վերաբե-

րութեամբ այդ համոզմունքը հետզհետէ
կազմվել է և մերք մեր հիւանդների վիճա-
կը այլ ևս չենք յանձնում բազմի բերմուն-
քին, այլ նրանց բժշկելու համար գիտնում
ենք գիտութեան օգնութեանը, նոյնը դեռ
չենք կարող ասել մեր հիւանդ անային կեն-
դանիները վրա, որոնք կազմում են մեր
հարստութեան, մեր տնտեսութեան մի նը-
շանաւոր ճիւղ:

Երբ մի կենդանի հիւանդանում է, մերք
աւելորդ ենք համարում դիմել գիտու-
թեանը, դիմել անասնաբույժի օգնու-
թեանը, այլ կամ թողնում ենք անասունին
անխնամ, ասելով թէ «ցար ինքն իրան
կանցնի», կամ սկսում ենք բժշկել տկար
անասունին այլ և այլ անային, մեր պատկե-
րից մեզ աւանդված և միշտ կասկածաւոր
միջոցներով:

Կարգավոր մեր լրագիրները, դուք անդա-
դար կը հանդիպէք անմիջանախի դան-
դաւների թէ այս ինչ տեղ անասունների
մի վարակիչ ցաւ է յայտնվել և ինչո՞ւ ա-
նասունները մեծ բազմութեամբ սատկում
են, այդպիսով մեծ քանակներ պատճառելով
մեր տնտեսներին, մեր գիւղացիներին, քա-
նի որ անասունը գիւղատնտեսի համար
հարստութեան ամենամեծ աղբիւրներից
մինն է: Բայց դանդաղորդները միմիայն
դանդաղում են, նրանք բաւականանում են
իրանց անմիջանախի դանդաղումով, ա-
ռանց վատահոգութիւն ունենալու դիմել ու-
սեալ անասնաբույժների օգնութեանը: Ե-
ւեթէ ուղեկցային էլ, չեն կարող դիմել ճշ-
մարիտ ուսումնաւոր առած անասնաբույժներին,
քանի որ նրանք չը կան էլ մեր մէջ: Իսկ
նրանց բացակայութիւնը մեր հասարակու-

թեան մէջ բացատրվում է նրանով, որ մեր
հասարակութեան մեծամասնութիւնը դեռ
ևս կարիք չունի այդ տեսակ մասնագէտ-
ներին:

Բայց ինչպէս առողջութիւնը կորցրած
մարդու համար անհրաժեշտ է բժշկը,
այնպէս էլ առողջութիւնը կորցրած անա-
սունի համար անհրաժեշտ է անասնաբույժը:
Առանց դրան երեւակայելի չէ կանոնաւոր
անտեսութիւնը, ինչպիսի անասնապահու-
թիւնը:

Բայց եթէ մեր երկրի գիւղատնտեսների
մեծ մասը, մեր գիւղական ամբօրը, որ դեռ
ևս աղէտ է, չէ հասկացել հիւանդ անա-
սունի խելացի բժշկութեան անհրաժեշտ-
տութիւնը, մերք հաւաստի ենք որ ընտա-
նի այլ և այլ անասուններ պահողների
փոքրամասնութիւնը արդէն հասկացել է
անասնաբույժութեան անհրաժեշտութիւնը:

Այդ է պատճառը որ հարգելով յՄշա-
կի ներկայ համարի ներքին լուրերի մէջ
մի ուսումնական հայ անասնաբույժի մեզ
մօտ դարձ մասին, մերք կարծում ենք որ
այժմ, երբ մեր երկրում հետզհետէ դար-
գանում է կանոնաւոր տնտեսութիւնը, ա-
նասնապահութիւնը, և առհասարակ հետզ-
հետէ սովորութիւն է դառնում թէ մեր
քաղաքներում և թէ գիւղերում ամեն տե-
սակ անային օգտուէտ կենդանիների պա-
հէլը, — աւելի և աւելի մեծ պահանջ
պէտք է զգացվի փորձված, ճշմարիտ ու-
սում առած, մասնագէտ անասնաբույժների
մէջ:

Գ. Ա.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ԲԱՆԻ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեր ժամանակը խռովութեան, անբաւականու-
թեան, ներքին և արտաքին պատերազմների ժա-
մանակ է, որոնց օրինակներով լցված են մարդ-
կութեան տարեգրութեան վերջին էջերը: Ան-
դարձեալ Եւրոպայի ձուլաբանները ու գլխարան-
ները սկսեցին եւ գալ նորանոր պատրաստութիւն-
ներով, դարձեալ նորա նաւատորմողը, մահաբեր
պաշարով բեռնաւորված, առաջ է թռչում ան-
պաշտպան տարածութիւնը պատանդելով:
Այսպէս, այժմ, եւրոպական ազգերի կենտրոնա-
խոյզ և կենտրոնամերձ ոյժերը դարձրած են Ե-
րկրային դէմ Բայց Եղիպատո, գուցէ, միայն
մասի փախկնալ է, և նրա փախուցիկ դիմադրող
թիւերը այս րօպէս այնպէս են խճճվել մի-
մեկանց հետ, որ հազիւ թէ հասարակ մասկանա-
ցուն այստեղից կարող է մի որչաք քան դուշակել:
Մի քան միայն յայտնի է, որ արեւելեան պատե-
րազմը ու արեւելեան խնդիրը դեռ ևս չարժանե-
րում են և, այս անգամ, նոր նիւթ է տալիս դե-
րանց Բեյրութը, մինչև այսօր անմասն մնացած
Փիլիսթինի կողմերից: Այս, Բեյրութը, որի անու-
րը հայը լսելով, նրա հաւրածաչ սիրտը լցվում է
հաղարարող դիմաւոր երանքներով, նրա անան-
ջին ստիպել հնչում է իր ազատութեան դաշա-
ւիկը, նրա երկները, առաջ թուրք ամպերով
կլաւած, այժմ խոտանում է հոգեկոյն պայծա-
րութիւն, և երբ միմիայն թշուառ ժողովրդի վի-

ճակը ու պատիւը ապահովված են յաւիտանա-
լայց, ախտա, այդ միայն դիմաւոր երանքն
էին, և աւելի ոչինչ: Ահանջ կանչի, Բեյրութի
կոնգրէս Այս քանի անգամն է, որ հայը արձա-
կում է տապալնից իր աղանձն, և ոչ մի անգամ
չէ պատահել որ դա յետ դառնար, աւետաբեր
ճիւղը կտուցին, այս քանի անգամն է որ հայ
մասնուր և տպագրութիւնը բողբոջ աշխարհի
առաջ իր չարաբոխ ազգի դրութեան մասին
ոչ մի անգամ դուր բողբոջն չը լսեցին: Բեյրութի
կոնգրէսը, որպէս միջազգային իրաւաբան տեսան,
տաւան և ինքնաբեր դարձւում գոմարված իր ամե-
նագին ոյժերից, հրապարակա իրաւացի համա-
րեց հայ ազգի անիրաւ հարուածները թիւթեացնել:
Եւ նոյն իսկ կոնգրէսը չը կարողացաւ կամ, ճիշդ
կը լինի ասել, չը կամեցաւ իր խօսքի կշիռը
պաշտպանել: Թիւթեացն, որից պահանջում էին վե-
րանորոգութիւնը քառ ու քանդ Հայաստանի համար,
թիւթեացն—այդ եւրոպացոց զեղեկիչ շեղմուն-
նորից բայց արեց իր փափուկ մախմուրի մարմինը
մերկաստիկի կանգնեց նոյն իրաւաբան անդամ-
ների առջև,— և ահա տրաւ դիւանդներին նման արե-
ցին իրանց կոտորը և ամեն մէկը նոյնպիսի կա-
րօտ է մի կտոր խորովածացու պոկել այն քնե-
րուշ շեղմունցի: Գործակից էլ ինչ լաւ բան կայ
աշխարհին երեսին, էլ ինչ կարօտութիւն կայ
թշուառ ժողովրդի միջակից թիւթեացնել և թիւթ-
եացի սիրտը ցաւեցնել որ չստանա ծծելով չա-
քար կու մաղէ: այն իրաւաբանութեան չիթուն-
քին: Բայց որպէս զի և Աստուծոյ հաճոյ լինե-
լով վարժված, փիլիսոփայաբար խրատում են
մեզ, ասելով, չճշեալ ազգերի պահանջմունքը—
ազատվել օտարի իշխանութիւնից—միայն այն
ժամանակը կարելի է համարել օրինաւոր, եթէ

դրա հատուտված են ինքնակրթութեան սկզբ-
բունքները վրա, եթէ այդ ազգերը ունեն ընդու-
նակութիւն իրաւորել մի ինքնատիպ արդիւնաբար
հանդէս, եթէ դրա, վերջապէս, դիւն են մի թան-
գաղին աւանդ ընդհանուր քաղաքակրթութեան
գանձարանի մէջ: Բայց այդ մի դատարի իմա-
տակութիւն է, որից մեր ժամանակի հօգրները
օգուտ են քաղում ամեն դէպքում, երբ ցանկա-
նում են անդրել միւր ուտել: Գոյաւ ասածի ճշ-
մարտութիւնը այնքան է, որքան եթէ ստով ձեռ-
քով կապած մարդից պահանջելիք, որ նա լաւ
ման գալ և զրոյթի, և կամ թէ բանտարկվածին
պատուիրէլը որ իր դաշտերը մշակել և քաղցած
չը մոռնի: Սակայն և մերք մեր կողմից հարց-
ները: Այս նոյն իսկ տիրապետող ազգի—Թիւթ-
եացի թանգաղին աւանդը ու քաղաքակրթու-
թիւնը որոնող արմենք, նրա կրօնամարտութիւնը ու
ստիպական ընթացքը մարդկութեան համար մի
ինչ թանգաղին աւանդ ունեն մարդկութեան զան-
ձարանի մէջ այն փոքրիկ սլաւոնական իշխանու-
թիւնները, որոնք այսօր վայելում են քաղաքա-
կան ազատութիւն, և եթէ ուսուց հովանաւո-
րութիւնը չը լինի, նոքա կը համնին այդ ա-
զատութիւնը, թէ, մնալով անտանելի լծի տակ,
այսօր նոյն բողբոջ պիտի յայտնեն, որ մերք
ենք յայտնում Ան և հայկական ազգը, XIV-դ
դարից դրեւում իր թագաւորական կարգերից, ա-
սիական հողի վրա միակ քրիստոնէայ ժողովուր-
դին է, որ հանդիսացած է աշխատող, մտածող և
աջակից առաջադիմութեան: Այն, հայոց ազգը,
թէ իր ցեղական ծագումով, թէ լեզուով ու պատ-
մութեամբ միշտ ունեցել է այն մարդկային ընդե-
րութիւնների յատկութիւնը, որոնք հուշակնել են
աշխարհայէն, արդիւնաբար, մշակող և զործող

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՂԱՐՍԻՑ

Օգոստոսի 16-ին

Ղարսի խառն ի խառն շինված տները, որոն-
ցից մեծ մասը երկյարկանի և եւրոպական են,
այնքան խիտ և իրար վրա են դարձված, այնքան
միմեկից գլխի են դրված, որ եթէ քաղաքը ըն-
դարձակվի, Ալեքսանդրապոլի շուրս տարածութիւն
կը բռնէ: Այժմ կառավարութիւնը սահմանափա-
կել է մի որոշեալ չափով քաղաքի մեծութիւնը:
Երբ կը լրանայ նշանակեալ չափը, այն ժամա-
նակ պէտք է յարկանի տներ շինել, որ ամեն
կողմից Ղարս թափվող ժողովրդին կարելի լինի
տեղաւորել:

Ինչի տաճիկներից շատ անշուն մասն է մնա-
ցել, բոլորը, ամենաշին քանակով ծախելով իրանց
ունեցած շունեցածը, քաղվել են թիւթեաց սահ-
մանից այն կողմը: Ինչպէս Ղարսի բնակիչները
պատում են, ցաւալի տեսարան էր, թէ ինչպէս
վերջին հրաժարական էին տալիս իրանց սուրբ
օճախներին, ինչպէս համբուրում էին տան պա-
տերը, սղորում, արտաստեղծ թրջում չէմբերը և
զանազան տիտը լայաթիւններով: արտաշա-
ժում իրանց զինին հաւաքված տիտը ամբօրին:

Տաճիկները քաղվեցին թէ չէ, իսկոյն ամեն
կողմից ներքին պէս թափվեցին Ղարս և բռնե-
ցին նրանց տեղերը: Ղարսը այժմ մարդկային զա-
նազան ցեղերի թանգարան է դառել, որովհետեւ աշ-
խարհիս ամեն բունջ ու պոճախից ինչ կարգի մար-
դիկ ասեւ, ինչ տեսակ տիպեր ասեւ, կը տեսնու
այստեղ: Ղարսի այժման խառնձաղանձ բնա-
կիչների մէջ վարքի, բարքի, սովորութեանց, խօ-
սակցութեան, բարբառների, հայտարարների, բնա-
ւորութիւնների... կողմից ամենին կապ և ներ-
դաշնակութիւն չը կայ:

Ղարսի մէջ հալկայ կայ: ասել են և առանց
երկար մտածելու թափվել են Ղարս: Արդարեւ
Ղարսի մէջ հալկայ կայ, բայց այդ հալկան, հա-
մանմատելով այժմանս արտաքին բազմութեան

իր հողի վրա: Այդ մարդկային ընկերութիւնները,
յայտնի բան է, ոչ թափարն ու մօղօլ է եղել,
այլ, հին դարերում, յոյն-հռոմէական, նորերում ու
երօպայեցի: Սոցա մոտաօրութեան եղանակին ու
կրթութեան կարգերին, թէ քիչ, թէ շատ աշխա-
տել է հետեւի հալկ: Սկզբ, արդարեւ, եւրօպական
բարեբախտութեան արմատներն չունեն, որ այ-
սօր մեր ճակատը զարգանքը, մերք դեռ ևս չու-
նենք Եւրօպայի լուսաւոր դպրոցները, որ կար-
գանային պատրաստվել կրթված սերունդներ,
բայց փոխանակ դոցա մերք ունենք վիշտո-
ւներ ու երկաթի վառարկներ, և մի այսպիսի
դրութեան մէջ մեր լուսաւորութեան հետեւող-
թիւնը, մեր փոքրաթիւ դպրոցները ու հասարա-
կաց ընկերութիւնները այսպիսի յատկութիւն է,
որ երբեք Եւրօպայի համակրութիւնը պիտի
դրաւ և ոչ մերք: Իրաւաբան Եւրօպային յայտ-
նի պիտի լինի այն հանգամանքը, որ հայ-
կական ինտերեսները նոյնանման են իր սեպական
ինտերեսներին և փոխանակ թոյլ տալու բռնա-
բարել մի ազգի նուիրական ցանկութիւնները,
նախ և առաջ նա պիտի պաշտպան հանդիսանայ
արդարութեան սկզբունքին: Արդարութեան սկզբ-
ունքը ամենին չէ ներում որ մի ցեղ միայն իր
զինքն ու ոյժերի չնորձով կառավարէ իւր-
մեկ, մտածելով, որ ուս անդրադուլի է մեզ
իրան կառավարելու: Բայց մի այսպիսի փոքր-
պետութիւն ցեղերի անաւարտականութեան նկատ-
մամբ հեղքում է մեր ժամանակի դիտութիւնը:
Ցեղերի նուաճումը կարելի է միայն բարոյական
և ոչ նիւթական արտապետութեամբ, այս պատ-
ճառով և Եւրօպայի պարտականութիւնն է ձե-
ռնառու լինել հայերի ազատութեան և ոչ խափա-
նել: Այդ ազատութիւնը, որ պահանջում ենք,
հայերի համար մի անձնաթիւ բան չէ, նոքա դո-

Այսպէս մի կողմից մենք տեսնում ենք որ մի
ակնկալութիւնները Եւրօպայից հաղիւ թէ կար
ղանան շուտով իրադրոծվիւ, աչքի առաջ ուն
նալով այն հազար ու մի դիպլոմատական կնճի
ները, որոնք իրանց մէջ կրում են յայտնի պ
տերգրմական նշանակաւ, և, գուցէ, անցելով Ե
թնդանութիւնի շտապիւնը Եւրպոտոսի դէմ, ա
յայտնի նշանների սկիզբն է։ Միւս կողմից եւր
պական սօցիալական կեանքի ընթացքը այնպ
է, որ շատ զփուսար է յուսաւ դա դիպլոմատ
րից մի էական բարիք հայերի համար։ Վիպլոմ
տիան ոչ ազգասիրութիւն է և ոչ մարդասիրակ
վարչակութեւթիւն. նրա բոլոր յարաբերութիւ
ններ հիմնուած են հաշիւների, աշխարհի շահե
ութեւթիւնների վրա։ Ինչ որ բարեխիղճ մարդ
թվում է աններելի, դիպլոմատիան համարձ
նու է առնում և յետոյ իր արածը արդարա
նում է տէրութեան ինտերեսների նպատակ
գործինակ եթէ մի աշխարհ, հալ ու մաշ լինե
հարստահարիչ կառավարչներին ձեռքի, պատ
րում է կամ ազաւում է օգնութիւն, դիպլո
տիան, մէջ մտնելով, այնպէս է տանում զոր
որ դա հակառակ չը լինէր իր շահերին, թ
խիստ հակառակ էր մարդասիրութեան կանոն
րին։ Սրանով միայն կարելի է լուսաբանել ա
յայտէս ասենք, միջազգային եղեռնագործութիւ
նները, որ մեր լուսաւոր դարու անօրին համ
կառավարում են ամեն օր։ Այս էմտից նայելիս
զարմանալի է, որ հայոց ազգը հասել է իր վ
ջին թշուառութեան և ոչ մի տեղից օգնութիւն

գրում են, որ առջի առաջ ունենալով այն յա-
ճախակի գանգաւանները, որոնք Անդրկովկասի բը-
նակիչների կողմից մոտում են ներքին գործերի
միջնորդութեան մէջ այն բանի դէմ, որ Ղարսի
նահանգի ուսանող հայապատկանները սաստիկ փառ-
ներ են կրում սրբական քրիստոնէի ասպատա-
կութիւններէն, որոնք յարձակուած են մեր սահ-
մանի վրա, կառավարութիւնը դիտարկութիւն
ունի այնտեղ աւելի զօրեղ պահապան գործ կանգ-
նեցնել, որը պէտք է թուանայ և վերադարձ
ասպատակամտութիւնների առաջն առնել: Այդ նը-
պատակով կառավարութիւնը Թէմրանի իր դե-
պարտութեան միջոցով իր ժամանակին դիմեց
պարսկաց կառավարութեանը, որ նա իր կողմից
աւելի զօրեղ միջոցներ գործ դնի քրիստոնէի դէմ,
որոնք Շէյխ-Աբդուլազիզի վերադառնալուց յետոյ
սկսել են սաստիկ ասպատակութիւններ գործել
մեր սահմանի վրա:

ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍ

Պօրտ-Սայիդի օգոստոսի 21-ից հեռա-
գրում են „Figaro“ լրագրին: Անգլիացիք
պատերազմական գործողութիւնները սնց-
կացրին պարանոցի հօդի վրա և շատ զը-
ժուար է իմանալ թէ ինչ է կատարուած
Իզմայիլիայի և Սուէզի մէջ, որովհետեւ հե-
ռագրերը նրանց ձեռքին է: Նաւատորմի ե-
րեսայր շատերի համար անսպասելի մի գործ:
Երբ անսպասելի էր նոյնպէս և նաւաս-
տիւների համար: Երբ նաւատորմը Ալէք-
սանդրիայի նաւահանգստից բաց ծովը
դուրս եկաւ, նա հրաման էր ստացել ու-
ղեւորվել Արեւիկ: Բացի այդ գեներալ Ու-
օլսթէյ պատուիրեց զենեքալ Գիմլին պատ-
րաստ լինել Արեւիկի ամրոցները բռնակա-
ծելու համար և փակված հրահանգներ
տուեց, որոնց նա միւս օրը լուսաբացին
պէտք է բանար: Զրահակիր նաւատորմի
երկու փոխ-ծովապետներն էլ փակված նա-
մակներ ստացան, որոնց բովանդակութեան
հետ նրանք պէտք է ծանօթանային Արեւ-
իկի նաւահանգիստը հասնելուց յետոյ:
Երեք մարդիկ միայն, զենեքալներ Ուօլսթէյ,
Էդի և ծովապետ Սէյմուր գիտէին, թէ
ինչ պէտք է լինի: Նաւատորմը իրանց հրա-
մանատարութեան տակ առան ծովապետ-

չէ գտնում: Այս կէտից նայելով, և տաճիկ կա-
ռավարները, վարժված ու նորացած անկախ
ուղեւորներն, օրհասական արջի նման կրկ-
նապատկան են իրանց հարուածները հայոց ազգի
վրա: Ուրիշ խնդիր է որ մի այդպիսի աշխարհա-
գիտութիւնը չէ չիտում աշխարհը, այլ քանդուք
է անում:

Մեր ձախողութիւնը մէկ չէ, երկու չէ, երեք
չէ, զորս անունը լեզուն է: Զայտի բան է, մի
ազգի, որ դրած է այդպիսի անաշուղ պայմանների
մէջ, զօրուար թէ կարճ միջոցում մեծ առաջադի-
մութեան տէր դառնայ, որովհետեւ դրսից զրկված
է պաշտպանութիւնից, ներսից՝ ապահովիչ հնար-
ներից, որպիսի են հասարակաց գործակցութիւն
լուսաբերութեան, ազգային անդամների առատ
զոհարեցութիւնները մոտաւոր աշխատող սերնդին,
որ սա կարողանար հայկական դաստիարակու-
թիւնը հաստատել անխորտակելի հիւրերի վրա:
Բայց այնու ամենայնիւ, եթէ նա դեռ չէ կարո-
ղացել մեծ քայլ փոխել առաջադիմութեան մէջ,
գոնէ փոխել է փոքրը, այսինքն ամենափոքրը: Եւ
այսօրեան բանագէտ նայել իր փոքր արածը իրան
անձնագրութիւն չէ համարում, այլ բնորոշակա-
ւակն, չբնականաւ աչքով նա քննում է այն ճա-
նապարհի մեծութիւնը, որ դեռ մնում է նրան
անցնել: Այն, մեծ է մեր հաւատը ու յօյրը դէպի
ապագան, որ և այս բոլորի տալիս է հայկական
ազգին: Եղբայրներին զրկել ու դուրսել և իրանց
այդքն տեսնել մշակուած բոլոր քաղաքական հա-
զմանքներով: Հայոց մամուլը, աւելի լատ յայ-
տարար լինելով հայկական մտքի ու մտածողու-
թեան քան թէ խախտու գիւլումախախտ, կը դա-
նի:

ներ. Բուէլ և Սէյդիվան իւրաքանչիւր զրա-
հակիր մօտ 800 մետր հեռավորութեամբ մի
բեռնակիր նաւ էր գտնվում, որ իր շարժ-
մունքները զրահակիրն համապատասխան
էր գարձնում: Ժամի 5-ին ամբողջ նաւա-
տորմը խարխուլ գոցեց Արեւիկի նաւահան-
գասի մէջ և պատերազմական դիրք բռնեց:
Նաւատորմը և զօրքերը չափազանց ոգի-
ւորված էին: Նրանք սպասում էին, որ ան-
յապաղ կը սկսվի բռնակռուութիւնը և որ
իրանք ափ կիջնեն: Ժամի վեցին յայտնվե-
ցան „Helicon“ նաւը ծովապետ Սէյմուրի
հետ և „Salawis“ Ուօլսթէյ և Էդի գեներա-
լների հետ: Նրանք առանց կանգնելու
անցան պատերազմական գիծը և անհետա-
ցան հօրիզոնի վրա: Նաւատորմը սաստիկ
զարմացած էր: Օֆիցիւրները, զինուորիկները
և նաւատորմը հարցնում էին միմեանց,
թէ արդեօք ինչ կը նշանակի ծովապետի և
զինաւոր հրամանատարի հեռանալը: Քսան
և Էօֆ նաւեր գեռ ևս խարխուլ ունէին
զգած: Երեկոյան եօթ ժամին երկու ծովա-
պետներն էլ բացարձակ ծրարները, որոնց
մէջ նրանց պատուիրած էր հանել խարխու-
լը և ժամի ութին արագութեամբ ուղե-
ւորվել դէպի Պօրտ-Սայիդ: Բացի այդ ծո-
վապետները հրաման էին ստացել այդ
շարժման նպատակը միայն կէս գիշերին
յայտնել նաւատորմին: Նշանակված ժամին
նաւատորմը ուղեւորվեցաւ դէպի Արեւիկ:
Այն գիշերը առաւօտեան երեք ժամին ծո-
վապետ Գօսգինա ափ իջնցրեց 600 զի-
նուորիկներ և 200 նաւատորմիկներ: Այդ փոք-
րիկ զօրարածին զրաւեց Պօրտ-Սայիդի
զինաւոր կետերը: Նաւատորմը ուղեւոր-
վեցին դէպի պօլիցիական բաժինները և
ժամադրման իր կալանաւորեցին առանց զը-
ժուարութեան: Սուէզի ջրանցքի զրահա-
նակը, հեռագիրները, շոգենակները, մի
խօսքով ամեն բան, ինչ որ կարող էր աղ-
մուկ բարձրացնել, անգլիացիները անցապաղ
իրանց ձեռքն առան: Առաւօտը ամբողջ
քաղաքը անգլիացիների ձեռքին էր: Անգ-
լիացիներին աջողվեցաւ ամեն տեսակ ընդ-
դիմադրութիւնը անգործ դարձնել:

նայ ազգի մէջ մի ոյժ և զօրութիւն, որ երբեք
չը գիտէ զոգորարել: Ես գիտեմ, մեր մէջ կան այն-
պիսի մարդիկ, որ իրանց գիտական բարձր
թիւնից բանի տեղ չեն դնում այսօրեան գործող
սերնդի աշխատութիւնը, բայց մեզ այնպէս է ե-
րեւում, որ դրանք, ապաւն փարկելով, բռնական
հարցանքների դեր են խաղում: Աւելի դանդ է
տեսնել, որ դրանցից մի քանիսը, որոնց մատե-
րին երբեք զրկչ չէ շարժվել ազգային խնդիրնե-
րի վրա խօսք բանալ և հասարակաց մարդը օգ-
տաւետ փատակներով շահել, հասել են այնպիսի
ծայրայեղութեան, որ միայն անպակաս է հոգե-
պէս հիւանդներին: Գրանց աչքում արժէք ունի
միայն այն բանը, որ ոչ հայոց ներկայ կենքին է
վերաբերում և ոչ հայերն կենդանի լեզուով է զը-
րած, այս պատճառով և իրանց օտարաբան, օտա-
րամիտ գրուածները համարում են հայի համար
մի փրկաւոր միջոց, վերանորոգութեան դարա-
գլուխ: Այդ հասկացողութեան մէջ մնալով մի-
չև նոյն իսկ մահուան կէտը, դրանք ամենայն
բան, որ տեղի է ու անպիտան, պատրաստ են
զոլաւանել, միայն թէ լաւ անունը չը լսուի:
պատրաստ են երկինք հասցնել զրահական
ձեռնդրուողներին, որոնք միակ արժանաւորութիւնը
իրանց տիրակիներ կաթիլն են և չթիւնքի չո-
ղորթութիւնը: և այս պատճառաւ ոսկի հա-
նուկվելով, միշտ երկաթի ձուկ են ածում:
Եթէ մենք այդ պարտքների ասածին աշակերտե-
ինք, այն ժամանակ մարդկութիւնը իր կենդանու-
թեան մէջ կը դառնար մի բրածոյ ու քարացած
բան: Բայց, բարեբախտաբար, ոչ զազաւարներ
ընթացքը և ոչ լեզուներ հասակը կախումն ու-
նեն առանձին մարդերի կամքից, և ժամանակակից
մարդը միշտ աւելի կարօտ է նորանոր գիտութիւն-
ների, նորանոր խնդիրների քան թէ երանակալու-

ԱՐՏԱԳԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պօլսից հեռագրում են օգոստոսի 16-ին,
թէ հաստատվում է այն լուրը, որ մինիստրների
խորհրդից յետոյ, որ կայացաւ շաբաթ օրը, Բ-
Կուրը ընդունեց պատերազմական դաշնագրի
անգլիական նախագիծը:

—Ալէքսանդրիայից հեռագրում են օգոստոսի
17-ին: Սուլթան-փաշա շուտով գործերի ղեկը
կընդունի կայսրէում: Լուր է տարածվել, որ
կայսրէում իրենք են սկսվում:

ՄԵՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՆԻՑ

ՍԻՄԲԵՐՍԿ, 23 օգոստոսի: Բուինակ քա-
ղաքի մէջ այրվեցան 300 տներ, որոնց
թուում հաշտարար ժողովը, զօրանոցներ,
ուսումնարանը, թուրքերի մզկիթը, խանութ-
ներ, հացի պահեստներ: Վնասները մեծ
են:

ԽԱՐԿՈՎ, 23 օգոստոսի: „Южный Край“,
լրագիրը հաղորդում է, որ Եկատերինսկայ-
ի նահանգի մէջ ներկայ ամառվայ ընթաց-
քում 523 հրդեհ է եղել, որոնք 400000 ր.
վնաս են հասցրել:

ՄԻՆՍԿ, 23 օգոստոսի: Այսօր հասա-
ւայտեղ պետական կայքերի մինիստրը, որ
ուղեւորվում է Բօրիսյակի Ռեցկի և Մօզիր-
սկի գաւառների ճահճների չորացնելու
աշխատանքները տեսնելու համար:

ՄԱՐՍԵՆ, 23 օգոստոսի: Գործերի դրու-
թիւնը ճշուիսի մէջ անհանգստացուցել է:
Լուր է տարածված, որ Արարի-փաշա, եթէ
անյաջողութեան հանդիպի, մտադիր է
փախչել Տրիպոլիս և դաշնակցութիւն կա-
պել Ալի-բէն-Կալիֆի հետ:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 23 օգոստոսի: Երեկ թագաւոր
կայսրը, կայսրուհին, թագաւորանդ Նիկո-
լայ Ալէքսանդրովիչ, Մեծ Իշխան Գեօրգի
Ալէքսանդրովիչ, և Մեծ Իշխաններ Սերգի,
Պապիկ և Ալէքսէյ Ալէքսանդրովիչներ բարե-
հաճեցին „Ալէքսանդրիա“ նաւով Կրօնշտա-
տ գնալով, իսկ այնտեղից „Կերթաւա“ նա-
ւով Տրանկունդ, որտեղ թագաւորական տան
ներկայութեամբ նաւախաղ է լինելու:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 23 օգոստոսի: „НОВОЕ
Время“, լրագիրը հաղորդում է, որ ուղար-

կված են նահանգապետների եղբայրու-
թիւնները ստանալու համար գիւղական
զաղթականութիւնները կազմակերպելու մա-
սին գրութիւններ, որոնց մշակել են գործին
ծանօթ անձինք: Սենատորներ Պօլսիցիկ և
Կօվալեւսկի մանրամասն գրութիւններ կազ-
մեցին ուսանող պօլիցիական հիմնարկութիւն-
ների մասին: Ֆինանսների մինիստրութիւնը
ենթադրել է փոքրացնել մաքսային բաժնի
ծախսերը:

ՌԻԳԱ, 23 օգոստոսի: Այսօր սկսվում է
ձիաբարձ երկաթուղիների շարժումը:

ՄՍՍԿԱ, 23 օգոստոսի: Զօրքերը թի, օ-
գոստոսի 25-ին կը սկսվի գիւղատնտեսական
մեքենաների կոնկուրսը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 23 օգոստոսի: „Пра-
вда. Вѣстн.“ լրագրի մէջ յայտնված է,
որ թագաւորը, թագուհին, թագաւորանդը,
Մեծ Իշխան Գեօրգի Ալէքսանդրովիչ և Մեծ
Իշխաններ Ալէքսէյ, Սերգի և Պապիկ Ալէք-
սանդրովիչ ուղեւորվեցան Տրանկունդ նաւա-
խաղին ներկայ գտնվելու համար:

ԳՈՒՐԵՆ, 23 օգոստոսի: Նրկու գիշեր
միմեանց ետեկց ամբողջ յարձակում էր
զինուորականների վրա, որոնք պահպա-
նում են քաղաքը: Հարկաւորվեցաւ զենք
գործ ածել: 20 մարդիկ վիրաւորված են:
Մի պօլիցիական սպանված է:

ՖԻԷՐՈՒՐԳ, 23 օգոստոսի: Ֆրէյբուրգի
և Կոյմարի մէջ երկաթուղու գնացքը 1200
ձանապարհորդներով դիպաւ հեռագրական
սիւնին, որ վայր էր ընկել փոթորկից: Առ-
այժմ գտնված են 50 սպանվածներ, վի-
րաւորվածների թիւը յայտնի չէ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 23 օգոստոսի: Պետական
բանկի 5% տոմսակր առաջին շրջանի ար-
ժէ 94 ր. 62¹/₂ Կ., երկրորդ 90 ր. 62¹/₂ Կ.,
երրորդ 90 ր. 62¹/₂ Կ., չորրորդ 90 ր. 12
Կ., հինգերորդ 89 ր. 87¹/₂ Կ.: Ներքին
5% տոմսակր փոխառութեան տոմսակր ար-
ժէ 215 ր. 50 Կ., երկրորդ 212 ր., արեւե-
լեան առաջին փոխառութեան տոմսակր ար-
ժէ 89 ր. 25 Կ., երկրորդ 89 ր. 25 Կ., եր-
րորդ 89 ր. 25 Կ., ոսկի 8 ր. 23 Կ.: Բու-
սանց 1 րուբլ լոնդոնի վրա արժէ 24,03
պէնս, ուսանց 100 ր. Համբուրգի վրա արժէ
205 մարկ, Գաթիլի վրա արժէ 252 Ֆրանկ
25 անաւիմ: Բօրսայի տրամագրութիւնը
թող է:

Իմպայր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

«Գրեհիկ» լեզու է, որ այժման հեղինակները
գործ են ածում—ափսոս չէ գրող լեզուն և այլն:
Եւ այսպիսի լուսաւորական հարցերը կարող է
լուծանել փոքր ի շատէ դաստիարակված երե-
խան: Անոնք երկու խօսք և մեք, որպէս չփոք-
ր շատէ դաստիարակված երեխայ, նոր գրախա-
նութեան շնորհով թափանցում են ժողովրդի դա-
տակարների մէջ և նոր իդէաներ, ընդարձակում
են նոցա աշխարհայնութիւնն սահմանները, կո-
կում են նոցա խօսակցութեան ձեւը զեղեկիկ
զարձվածներով: Նոր լեզուն, որ իր փոխական
բաղադրութեամբ հայոց բաղաձիւղ բարբառնե-
րի ոգին ու շունչն է, առաջ է եկել այն ժայռա-
նակ, երբ գրաբարը կորցրել է իր շարժուն ոյժը,
երբ նա դադարել է մատակարարել մտքի և օրոքի
պահանջմունքը, և այդպէս թառամել է, ընկել է
այն արմատից, որ նորան տալիս էր ծնունդ ու
անունը: Այդպէս են գոյացել և նոր յոյնարէնը,
նոյնպէս զերմանական և բօմանական անուան-
ված լեզուները, որպէս մեր մէջ և աշխարհաբար:
ձիւղ խօսելով, լեզուները իրանց զարգացման
մէջ չեն ազավաղվում, այլ փոփոխվում են յայտ-
նի բնական օրէնքների համաձայն: Օրաֆորդի պրո-
ֆեսօր՝ Մաքս Միլլերը—այժման համալսարանի
լեզուագիտութեան պարագլուխը—ասում է. ով
որ նոր լեզուներում ուրիշ բան չէ տեսնում բայց
միայն ազավաղումն և զեղծումն, նա շատ փոքր
հասկացողութիւն ունի լեզուի իսկական բնու-
թեան մասին:

(Կը շարունակվի)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիսի Հայ Թատրոնական մշտական խումբը 'ի նշան իւր խորին համակրութեան դէպի Հայ ուսուցչական ժողովը, հինգշաբթի, օգոստոսի 26-ին, կը ապր ներկայացունէ հետեւեալ պիէսները:

«Ժօզէ ֆի փարիզի շրջմովի երեխայ», երկու արարածով, Թարգմանութիւն Ֆրանսիէի Երեւելից և «Բուրի Ամուսնութիւն», գործ Մօլիերի, Թարգմանութիւն Չմիլեանի: Ցումանները թէ վաղորդ և թէ ներկայացման օրը ծախում են Արծրունու Թատրոնի կասսայում:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ նախագարարատութիւնները հողացող կարգադրել ցանձա- ժողովը ինքրում է այն պարաններին, որոնք օր և է ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ցանկա- նում են ստանալ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԱԿԱՆ համ հաղորդել նորան, որ բարեհա- ձն ՇՆՈՐՀ ԲԵՐԵԼ նրա ԳՐԱՍԵՆՆԱԿԱՆ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԻ ՄԵՋ № 170: Գրասենակը բաց է ԱՄԵՆ ՕՐ առաւօտեան 9 ժա- մից մինչև 11 ժամ:

Въ Редакціи газеты «МШАКЪ»

Продается БРОШЮРА

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ ТУРЕЦКИХЪ АРМАНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

ԿԼԻԶԱՐԵՎԻ և Ջագումենու ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ մէջ (Սաղագրա- փողոց № 38), բացվում է մի ԲԱԺԻՆ ՓՈԳՐԵՐԻ համար և ՉՈՐՐՈՐԴ ԳԱՍԱՌՈՒՆ:

1—3

ՄԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂ, որ այժմ արդէն Մանգլիսում է ապրում, յանձն է առնում պարապել երեխաների հետ՝ թէ արբունական և թէ հայոց ուսումնարան- ների աշակերտների և աշակերտուհիների հետ:

Պայմանները կարելի է առաջարկել հե- տեալ հասցեով. Манглись, Габриэль Мирзоевъ, въ рошѣ, дача Марѣи Тимоѣевоѣ.

ԹԷՑ առաջին հոնձի այս տարի չա- փազանց գոյնաւոր և հոտաւետ: Այդ թէյից ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ ստացված է 50,000 ֆունտ և ծախվում է 25% էժան և աւելի լաւ քան թէ ուրիշ տեղ: Օրինակ. Լաւ 40ՆԳՈ թէյ 1 ռ.—1 ռ. 20 կօր., պատուական ՍԱՆՅԱ թէյ 1 ռ. 40 կ., հիանալի ՄՈՆԿ թէյ 1 ռ. 60 կ. այս թէյ ամեն տեղ ծախվում է 2 ռ.—2 ռ. 50 կ., գեղեցիկ ԿԱՅՍԱՆԻ թէյ 1 ռ. 80 կ. և ամենալաւ ֆու-չու-ֆու թէյ 2 ռ. մա- ռուր թէյ առանց թղթի: Նոյն տեղը սովորաբար լինում են 500 երկաթէ ՄԱՀԱԿԱԼ- ՆԵՐ 6 ռ.—60 ռ., երկաթէ ԳՐԻՉՆԵՐ ամբողջ Անդրկովկասի համար, շօղաղ ֆրայ, Շեփիլդի ԳԱՆԱԿՆԵՐ, վերականգնող ՄԱԿՄԱՍՏԵՐ մազերի համար, հրացաններ ԳԱՌԻ, ԲԷՎՈՎԵՐՆԵՐ ՎԵՐԻԼ, ԹԱՄԲԵՐ Բարնբերի, Կոյմանի նըշըշայ, ԱԲՐՈՄԵՆ Եփարցի կէս գնով: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ, ԹԷՑԼԻՍԻ ՄԵՋ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԻՑՈՒՄ № 156, 157, 158, 159 և 100:

30—100

Վ. ՇԱՀՎԵՐԴԵԱՆԻ ԼՐԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ

Վաճառվում են ի միջի այլոց հետեւեալ մանկավարժական գրքերը:

- | | |
|------------------|---|
| Бенекс. | Руководство къ воспитанію. Переводъ съ послѣдняго нѣмецкаго изданія подъ редакціею Весселя. Спб. ц. 2 р. 75 к. |
| Бэнъ. | Психологія. Переводъ съ англійскаго. Спб. ц. 2 р. 90 к. |
| Вундтъ. | Основанія физиологической психологіи. Дополнено по новѣйшимъ изданіямъ. 2 ч. М. ц. 7 р. |
| Джевонсъ. | Основанія логики. Пер. съ англійскаго языка. Спб. ц. 70 к. |
| Евстафьевъ. | Начальныя основанія педагогики и дидактики. Вып. 1-й Спб. ц. 60 к. |
| Ельницкій. | Курсъ дидактики. Пособіе для учебныхъ заведеній, въ ко- торыхъ преподается педагогика. Спб. ц. 90 к. |
| Ельницкій. | Методика начальнаго обученія отечественному языку. Спб. ц. 90 к. |
| — | Педагогика. Спб. ц. 83 к. |
| Амосъ Номенскій. | Великая дидактика. Спб. ц. 3 р. 45 к. |
| Корфъ. | Наша педагогическія вопросы. М. ц. 2 р. 60 к. |
| Струве. | Элементарная логика. Варш. ц. 1 р. 15 к. |
| Спенсеръ. | Воспитаніе умственное, нравственное и физическое. Спб. ц. 1 р. Основанія психологіи. Съ приложеніемъ статьи. Сравнитель- ная психологія челоѣка. Спб. 4 т. ц. 8 р. |
| Тайлоръ. | Антропология съ 78 рисунками въ текств. Спб. ц. 3 р. 50 к. |
| Новиль. | Логика гипотезы. Спб. ц. 1 р. 75 к. |
| Ушинскій. | Человѣкъ какъ предметъ воспитанія. Опытъ педагогической антропологии 2 т. Спб. ц. 5 р. 20 к. |
| Фонъ Раумеръ. | Исторія воспитанія и ученія отъ возрожденія классицизма до нашего времени въ 2 частяхъ. Спб. ц. 5 р. 60 к. |
| Шмидтъ. | Исторія педагогики, изложенная во всемірно-историческомъ развитіи и въ органической связи съ культурною жизнью народовъ. Изд. 3-е дополненное и исправленное Ланге: т. I История педагогики до христіанской эры ц. 4 р. 60 к.; т. II Отъ Христа до реформации, ц. 4 р. т. III Отъ Лютера до Песталоцци, ц. 6 р. 35 к. т. IV ч. I Христіанское гу- манное воспитаніе ц. 4 р. т. IV ч. II Германія и ея школы ц. 4 р. Цѣна всѣмъ пяти книгамъ 22 р. 95 к. |
| Шутце. | Училищевѣденіе. Практическое ученіе о воспитаніи и обу- ченіи для семинарій и учителей народныхъ школъ. Глу- хово ц. 1 р. 75 к. |

1—5

Լոյս տեսան «ՎԱՐԺԱՐԱՆԻ» առաջին և երկրորդ համարները: Ստորա- գրուել կարելի է Վ. Շահվերդեանի Լրա- գրական գործակալութեան խանութում և պ. Ծատուրեանի Դէպոյում: Ցարեկան զինն է ՀԻՆԳ ԲՈՐԸԼԻ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ նախագարարատութեան ՏՈՄՍԱԿ ցանկացողները կարող են ստանալ Ուսուցչական Ժողովի ԳՐԱՍԵՆՆԱԿԱՆՄ, որ գտնվում է ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԻՑՈՒՄ № 170. ՏՈՄՍԱԿ զինը 2 ռուբլ է:

ԼՈՅՍ ՑԵՍԱԻ ՆՈՐ ԳՐԳՈՅ

ՍՐԻՆԳ ՀՈՎՈՒԱԿԱՆ

ԵՐԳԵՐ, ՈՏԱՆԱՌՆԵՐ ԵՒ ԱՌԱԿՆԵՐ

ընթերցատէր մանուկների համար

ՏԱՆԸ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ

ԳՐԵՑ Վ. ԱՂԱՆԱՆՑ

Վաճառվում է Վ. Շահվերդեանի Լրա- գրական խանութում գինն է 20 կօպ. օտար տեղերից գինում են հետեւեալ հաս- ցեով: Тифлисъ, въ газетное Агентст- во В. Шавердова.

16—25

Պատիւ ունիմ յայտնել Թիֆլիսի եւ ՆՈՐԱ ՉՈՐԱ ՎԻՃԱԿՆԵՐԻ ԲՈՂՈՐ ԵՐԵՑՓՈՒՆՆԵՐԻՆ ԵՒ ՔԱՀԱՆԱՆԵՐԻՆ, որ համաձայն դաշնագրի ներկայ թուի օգոստոսի 15-ից ՎԵՐՋԱՑԱՆԻ մամուլաձուլութեան ՆԱԽԿԻՆ կապալա- ռուի պայմանագրով և այսուհետեւ ՊԷՏԲ Է ԳԻՄԵԼ ԻՄ ԽԱՆՈՒԹԻՐ մոմ գնելու համար, օրպէս նոր կապալաւոր: Առեւտրի խանութը իւր նախկին տեղն է: Կապալաւորութեան: 2—3

ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻ ՄԵԿԵՑ

ՍԿՍԵՑ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ՎԻԵՆԱՑՈՒՄ

L'ORIENTAL

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԹԵՐԹԸ, ԱՄԻՍԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ:

«Ժուրնալ դ'Օրիան» լրագրի հին բաժանորդներին դադարեցրած թերթի տեղ կուղարկվի այդ նոր հրատարակութիւնը:

«L'Oriental» թերթի տարեկան զինը 8 ռուբլ է, կէս տարվանը 4 ռուբլ: Գրվել կարելի է «ՄԵՍԱԿ» խմբագրութեան մէջ, կամ ուղղակի Վիեննայում գիւմ- րով հետեւալ հասարակ հասցեով: Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt 9.

ՄԻՋԻ ԲՈՂՈՂ, ԿԱԹՈՂԻԿԵՍԿԱՅ ՓՈՂՈՂԻ ԱՆԿԻՆ Ն 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԵՆԱՑԻ ՄԵՐԵԼ ամե- նայն տեսակի, ֆրանսիական և անգլիական երկաթէ կրակաւորներ 8—30 ռ., չա- մադաններ 250—25 ռ., սակփոյաժներ 1. 30—12 ռ., օսւն դուկն եր ձա- նապարհի 6—35 ռ., մարմաներ (ногреды) 6—25 ռ., օսւն փարն եր 60 կ.—1.25 ֆունտը, կուխների պինձէ ամաններ, գերանիայի երկաթէ էմալով ամաններ. ու մի վաղն ի կն եր մրա մօրն ի 38 ռ.—75 ռ., հրացաններ 28 կ.—240 ռ., պարօր կայ գինեկաձուլների, հանրային և դարեջրի (для зельтерскихъ водъ и пива) զուլթուկ (пучк), պարտաներ սամուկարի և չայու, զանալ չանգալ զանազան ֆարրիկաների 1 ռ. 20 կ.—25 ռ. դուժներ. զրաւիթներ 1 ռ. 80 կ.—5—60 կ. դանակ ջրի 1—60 կ.—12 ռ., դա- նակ հացի 20 կ.—1 ռ., հատը, կուխների 1—40 մինչև 3—20 կ. պրիբօ- միս կարելու մաշինայ. Անգլիական օթներ, Երբանակի չայիկներ, կաթէ- նիկներ ամենայն տեսակի, ջաղացներ կաթէի համար, ֆրիւր—Չուր մարբրու, կրամալ կարօրկէն 18 կ., վաքս ֆրանսիայի ձակոյ, թուղթ փոշալ, կանկերա- ներ, սուրճուչ, մառիա, զրկ երկաթէ, գրաւիթ, քարեաւառակ, թանաք, թանաքամաններ, պրեսպարներ, դաշներ սեղանի և չայու ֆրաժէ, վարչաժի թանաքամաններ, պրեսպարներ 1—50 կ. մինչև 12 ռ., և չայու 45 կ.—5 ռ., չա- և բրիտանակի դուժներ 1—50 կ. մինչև 12 ռ. 20 կ. ջուլա, պր- միկէք 45 կ.—5 ռ., չամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ռ. ջուլա, պր- սապարկաններ վարչաժու, Բեքիւնի ԿԱՂՇՆԵՐ, ամեն տեսակ, զուլթաններ կա- նանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուլա, չալիկներ, մարդկերանց զաւու- տիկներ, զանկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրեի և ջրի, սապոնի, պոլի և մայու ոսկրէ, գուտապրիւրով և փայտէ, չառաններ գլխի, ջրի, սապոնի, պոլի և կարալի համար, չուլքի թէլ (бумага) մատակի կօժի և չալէ (гарусъ) ֆէլ- չառակէք մարդկերանց և կանանց, պրոտմաններ, քիւաններ, պապիրոսի ամաններ և մանր գորաներիկի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.—30 կ., կաթ, հոտաժէա ջրեր, պուրա, Գլիցերին ջրի քաղաւ, հոտաժէա պարաչոներ ԿՐԵՐԻ ԼԱՐՈՐԱՏՈՒՑ. և այլն և այլն: Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերջիշեալ ապ- րանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՔԱՅԵԼ ՏԵՐ ՆԻԿՈԼՈՒՍԵԱՆՑԻ պահեստում: (Въ складѣ) միջի փողոցում կաթիլիկաց փողոցի ան- կիւնում № 13.

Օտարաբարաջից կարող են գիւմել հետեւեալ հասցեով. Тифлисъ Ми- хайлу Н. Теръ-Никогосову.

121—180

ՄԻՋԻ ԲՈՂՈՂ, ԿԱԹՈՂԻԿԵՍԿԱՅ ՓՈՂՈՂԻ ԱՆԿԻՆ Ն 13.